ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 12 >> 12 2012թ. N: 339-Ա գ.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՐԹԻԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ԱՐԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <<ժ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի <<50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) լիազորությունները բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին վերապահելու կամ այդ մարմինների որոշմամբ մասնավոր ընկերություններին պատվիրելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի N 1923-Ն ու 2005 թվականի մայիսի 19-ի N 1187-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին >> N 732-Ն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերստուգող Արա Թադևոսյանին 2013 թվականի հունվարի 8-ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ հաստիքի կրճատման կապակցությամբ, միաժամանակ նրան ազատելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Հոռոմի բժշկական ամբուլատորիա>> և <<Պեմզաշենի առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգողների պարտականությունների կատարումից:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Արթիկի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն Յուրիկ Ղազոյանին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել վերջնահաշվարկ:

Իսկականի հետ ճիշտ է՝

Ա.ԳԻԶԻՐՅԱՆ